



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ՝  
«ԲՆԱՊԱՌՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ



*Մարտինյան*

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ  
«14» 11 2017թ

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՀԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 100

Ձեռնարկողը՝

«Ախրալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ  
*Հովու մարզ, ք. Շամույլ*

Գործունեությունը՝

Ախրալայի հարստացուցիչ ֆաբրիկայի բացահանքի  
արդյունահանված դարաձքում պոչերի  
պահեստավորման շրջակա միջավայրի վրա  
ազդեցության գնահատման հաշվեկրվություն  
*Հովու մարզ*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿԻ  
տնօրեն՝

*Վ. Սահակյան*



Առդիր եգորակացությունը՝ *9* թերթ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՍԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՍՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 100

<14 > 11 2017թ.

**<<Ախթալայի հարստացուցիչ ֆարբիկայի բացահանքի արդյունահանված տարածքում պոչերի պահեստավորման>> աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Պատվիրատու՝

<<Ախթալայի ԼՀԿ>> ՓԲԸ

Նախագծող՝

<<Ակունք-Ֆիրմա>> ՍՊԸ

Ներգրաված փորձագետ

Ա. Թարգերոյան

Ներկայացված նյութեր՝

Աշխատանքային նախագիծ.

- շրջակա միջավայրի վրա ազդեցության

(ՇՄԱԳ) հաշվետվություն,

- նախագծային փաստաթղթեր և գծագրական

նյութեր:

Տեղադրման վայրը՝

ՀՀ Լոռու մարզ

*Կողաց Տեղ օրինակ  
14.11.2017թ. Ժեր*

Այս նախագծի նպատակն է ընտրել և նախագծել պոչերի կուտակման այնպիսի տարբերակ, որ նրա շահագործումից բնությանը հասցվի հնարավորինս նվազագույն վնաս, լինի տեխնիկապես իրականացվող և անվտանգ, տնտեսապես շահավետ և հեշտ շահագործվող:

Ավանդաբար, հարստացման պոչերը պահեստավորվում են պոչամբարներում: Խստացնելով էկոլոգիական պահանջները, ձեռնարկությունների համար առավելապես արդիական է դառնում խտացված և ջրազրկված պոչերի պահեստավորումը բացահանքի արդյունահանված տարածքում: Այս եղանակի ներդրման արդիականությունը որոշվել հետևյալ պատճառներով.

1) պոչերի ավանդական պահեստավորման համար տարածքների բացակայությամբ;

2) շրջանառու ջրի օգտագործման արդյունավետությամբ;

3) պաշարները սպառաց բացահանքի առկայությամբ;

4) պոչամբարի շահագործման համեմատաբար բարձր ծախսերով:

Էլ ավելի ռադիկալ եղանակ է համարվում չոր պոչերի ստացումը: Այդ ստեմանոգիայի համաձայն, պոչերը խտացումից հետո ենթարկվում են ջրազրկման միջն 8-10% խոնավությամբ մամլազուիչ կիրառմամբ:

Առաջարկվող համակարգը թույլ է տալիս լիովին իրաժարել պահանջարկ և շրջանառու ջրի մատակարարումը հասցնել մինչև 91%:

Ջրազրկված պոչերը պետք է հարմար լինեն տրանսպորտային փոխադրություններով տեղափոխման համար և ունենան օպտիմալ մնացորդային խոնավություն: Հարստացման չոր պոչերի տեղափոխումը իրականացվում է իքնաթափերով՝ որով հանքարար բերվում է



հարստացուցիչ ֆաբրիկա: Պահեստավորման ընթացքում պոչերը եթարկվում են տոփանման բուլղոգերի, կամ զլանի օգնությամբ և ծածկվում դատարկ ապառների շերտով:

Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկան գտնվում է Ախթալա կայարանից 2.0կմ հեռավորության վրա դեպի հյուսիս-արևմուտք, իսկ ներկայիս գործող պոչամբարը տեղադրված է Նահատակ գետի կիրճում: Շամլուղի պղինձ-հրաքարային հանքավայրը գտնվում է Շամլուղ քաղաքի մոտ, Ախթալա գետի ավազանում, Ախթալայի կայարանից մոտ 6.0կմ հեռավորության վրա: Մոտակա բնակավայրերն են Բենդիկը (3.0կմ) և Վերին Ախթալան (5.0կմ):

Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկայի «Նահատակ» գործող պոչամբարը վերականգնվել և ընդլայնվել է 2009թ., որի մնացորդային ծավալը հնարավորություն կտա ևս մեկ տարի շահագործել հարստացուցիչ ֆաբրիկան: Ֆաբրիկայի հետագա շահագործումը կապված է նոր պոչամբարի կառուցման՝ պոչերի կուտակման համար նոր ծավալի առկայությունից, կամ այլընտրանքային կառույցի հետ, որտեղ հնարավոր կլինի պահեստավորել պոչերը:

Պոչերի կուտակման խնդիրը լուծելու նպատակով քննարկվել է երեք տարբերակ.

- Գործող պոչամբարի պատնեշի բարձրացում;
- «Նահատակ» պոչամբարից ներքի ընկնող տարածքում նոր պոչամբարի կառուցում;
- Հարստացուցիչ ֆաբրիկայի պոչերի խտացում, քամում՝ հասցնելով պոչերի խննավորությունը 8-10%, ինքնաթափերով տեղափոխում ու կուտակում բացահանքի մշակված (արդյունահանված) տարածքում:

Բացահանքը շահագործվում է 340 օր/տարի, երկու 8-ժամյա հեթափոխով, օրը 16 ժամ: Ստորգետյա հանքում հանքաքարի արդյունահանումն իրականացվում է պայթանցքային հանքահատման եղանակով՝ պայթանցքային լիցքերով: Հորատումը կատարվում է “թաց” եղանակով՝ ձեռքի հորատիչներով: Հորատամուրճերը սեղմված օդով ապահովելու համար հանքում տեղադրված են հինգ կոմպրեսորներ, որոնց հովացումն իրականացվում է շրջանառու ջրով: NN 1,2,3 տեղամասերում (NN 140,215,305 կապիտալ հանքուղիներ) արդյունահանված հանքաքարը հանքիցանցքով մատուցվում է տրանսպորտային հանքուղի, հանքաքարի պահեստ, այնուհետև տեղափոխվում հարստացուցիչ ֆաբրիկա:

Հանքը և հարստացուցիչ ֆաբրիկան աշխատում են տարեկան 352 օր:

Հանքաքարի վերամշակման տեխնոլոգիական սխեման ներառում է.

- երկփոլային ջարդում՝ նախնական քարմաղումից հետո;
- երկփոլային աղացում;
- պղնձի հիմնական և ստուգիչ ֆլոտացում՝ խտանյութի եռափուլային վերամաքրմամբ;
- պատրաստի պղնձի խտանյութի խտացում և քամում:

Հանքահարստացումն իրականացվում է ըստ դասական սխեմայի: Հիմնական ֆլոտացման խտանյութը ենթարկվում է եռափուլային վերամաքրման, իսկ պոչերը ուղղվում են ստուգիչ ֆլոտացման: Ստուգիչ ֆլոտացման և I վերամաքրման խտանյութերն ուղղվում են աերացիա, որից հետո վերադառնում են հիմնական ֆլոտացման զլամաս: Ստուգիչ ֆլոտացման պոչերը հանդիսանում են թափոնային և 150մմ տրամագծով խողովակաշարով տեղափոխվում են պոչամբար:

500.0հազ.տ/տարի վերամշակվող հանքաքարից նախատեսվում է տոտանալ 1160.0տ պղնձի խտանություն: Պատրաստի խտանյութի խոնավությունը կազմում է 9%:

Ներկայում պոչերը պահեստավորվում են “Նահատակ” պոչամբարում, որը գտնվում է Այրում գյուղի վարչական տարածքում՝ 6.5կմ հեռավորության վրա: Պոչամբարը տղմալցային տիպի է, առաջնային պատնեշը քարե-լիցքային է ( $H = 7.0\text{մ}$ ): 977.0մ երկարությամբ պարզեցված ջրերի կողեկտորը կազմված է մետաղյա խողովակներից՝ Ø630x12մմ, երկարքետոնե պատյանով: Նախատեսված է ցամաքուրդային ցանց, իմկ գետի ջրերի հեռացման համար՝ բետոնե ջրհեռ ջրանցք: 6424.0մ երկարությամբ պոչատարը բաղկացած է

2 գծից: Պոշատարն ունի երեք թունելային և 2 դյուկերային անցում: Բաց մասերում այն կազմված է մետաղե խողովակներից (Ø200), թունելներում՝ պոլիէթիլենե խողովակներից:

Ներկայացված նախատեսված է կոմբինատի տարեկան 500հազ.տ/տարի արտադրողականության համար, համաձայն որի հանքահարստացման տեխնոլոգիան մնում է անփոփոխ նոր սարքավորումների տեղադրում, նոր ռեագենտների օգտագործում կամ նրանց ծախսերի փոփոխություն չի նախատեսվում: Փոխվում է միայն պոչերի կուտակման և պահեստավորման տեխնոլոգիան, որը նախատեսվում է իրականացնել չոր եղանակով: Այդ նպատակով հարատացուցիչ ֆարբիկայի նախկին պահեստների և հարակից տարածքում նախատեսվում է տեղադրել պոչերի խտացման և քամման տեղամաս: Անմիջապես պահեստի տարածքում տեղադրվելու է մամլոքամիչ, իսկ հարակից տարածքում՝ խտացուցիչ:

Համաձայն տեխնոլոգիական սխեմայի, ֆլուտացման պոչերը ինքնահոս մատուցվելու են Ø 24մ մակնիշի խտացուցիչ: Խտացված խյուսը 50-60% պինդ մասի պարունակությամբ պոմպով մղվելու է S-600մ<sup>2</sup> մակնիշի երկու մամլոքամիչ: Մամլոքամիչից ժապավենային փոխակրիչով պոչերը 8-10% խոնավությամբ տրվելու են ժամանակավոր պահեստ, որտեղից 24.0տ բեռնունակությամբ ինքնաթափերով տեղափոխվելու և պահեստավորվելու են բացահանքի արյունահանված տարածքում:

Առաջին փուլում ծավալ ստեղծելու համար բացահանքի ստորին մասում նախատեսվում է կառուցել քարե-լիցքային պատնեշ: Պատնեշը կառուցվելու է 1140մ նիշի վրա, 15.0մ բարձրությամբ և 7.0մ լայնությամբ: Վերևի բիեֆի թեքությունը  $m=1:2.0$ , իսկ ներքևի բիեֆի թեքությունը  $m=1:1.4$ : Պատնեշի մարմինը լինելու է բացահանքից հանված դատարկ ապարներից: Լցնումը կատարվում է շերտերով՝ ոչ ավելի, քան 1.5մ հաստությամբ, և տոփանվում:

Լցված գրունտի ծավալային կշիռը՝ շերտերի տոփանման միջոցով, պետք է հասցվի 1.6-1.7տ/մ<sup>3</sup>: Տոփանումը կարելի է իրականացնել զուգամեքենայի կամ բեռնված մեքենայի միջոցով: Անցումների քանակը որոշվում է փորձով՝ ելնելով այն պայմանից, որ ստացվի վերը նշված ծավալային կշիռը: Պատնեշը կառուցվում է միայն 1-ին փուլում առաջնային ծավալ ստանալու համար 180.0հազ.մ<sup>3</sup> կամ 500.0հազ.տ: Հետագա 2-րդ և 3-րդ փուլերի համար պատնեշի կառուցում չի նախատեսվում, իսկ առաջնային պատնեշը մնում է պոչերի տակ: 2-րդ փուլի ծավալը կկազմի 28.0հազ.մ<sup>3</sup> կամ 75.6 հազ.տ, իսկ երրորդ հերթը՝ պոչերի պահեստավորումը մինչև 1160մ նիշը՝ 882.0հազ.մ<sup>3</sup> կամ 2 381.4հազ.տ: Ընդհանուր պահեստավորվող չոր պոչերի ծավալը կկազմի մոտ 1.1մլն.մ<sup>3</sup> կամ մոտ 3.0մլն.տ:

Համաձայն ներկայացված նյութերի՝ պոչերի պահեստավորման տեխնոլոգիան հետևյալն է:

- պոչերը բեռնատարներից դատարկվում են բացահանքի արյունահանված տարածք, վրայից ծածկվում են 0.3-0.4մ հաստությամբ դատարկ ապարների շերտով և հարթեցվում,
- պահեստավորվող պոչերի շերտի հաստությունը պետք է համապատասխանի 0.7-0.8մ-ին,
- տոփանումը իրականացվելու է բեռնված մեքենայով՝ հասցնելով ծավալային կշիռը 2.7-2.8տ/մ<sup>3</sup>:

Մանր ֆրակցիա պարունակող պոչերի (60-65%, 74մկ) կուտակումը (8-10% խոնավությամբ) չոր և շոգ եղանակներին կրերի փոշեգոյացման: Փոշու արտանետումները նվազեցնելու համար այն նախատեսվում է ծածկել ավելի խոշոր չափսերությունում դատարկ ապարների շերտով և պարբերաբար ջրել:

Նախատեսված տեխնոլոգիան կիրառելու դեպքում փաստացի՝ իրականացվում է բացահանքի փուլային մեխանիկական ռեկուլտիվացիա, իսկ վերջանկան վակերեսին հասնելուց հետո՝ նախատեսվում է իրականացնել նաև կենսաբանական ռեկուլտիվացիա: Այն թույլ կտա վերականգնել լանդշաֆտը և բնական դրենաժային համակարգը: Այրատվի դատարկ ապարների ծավալը և նրանց զբաղեցրած տարածքը:

Հարստացուցիչ ֆարիկայի ջրամատակարարումը թարմ տեխնիկական ջրով իրականացվում է Դեբեղ գետից և Ախրալա վտակից: Դեբեղ գետի վրայի ջրառը գտնվում է 550մ ծ.մ. նիշի վրա, ջուրը երկու պոմպերով մղվում է ֆարիկայի արտադրական ջրի երկու ռեզերվուարներ՝ յուրաքանչյուրը 500.0մ<sup>3</sup> տարողությամբ: Ճնշումային ջրատարի երկարությունը 4.5կմ է, տրամագիծը՝ 273մ: Ռեզերվուարներից թարմ ջուրը ինքնահոս եղանակով մատուցվում է ֆարիկայի օբյեկտներին: Ախրալա գետի վրայի ջրառը տեղադրված է 907մ ծ.մ. նիշի վրա, ինչը թույլ է տալիս ջրի տեղափոխումը ռեզերվուարներ իրականացնել ինքնահոս եղանակով՝ 159մմ տրամագիծով ջրատարի միջոցով:

Ներկայումս հարստացուցիչ ֆարիկան փաստացի աշխատում է ջրի ուղահոս համակարգով, բարդ լեռնային ռելիեֆը դժվարեցնում է գոյություն ունեցող շրջանառու համակարգի շահագործումը: Պոշամբարի պարզվածքը 1987.2հազ.մ<sup>3</sup>/տարի քանակով թափվում է Դեբեղ գետը:

Նոր նախագծով նախատեսվում է շրջանառու ջրի մատուցումը իրականացնել ոչ թե պոշամբարից, որի անհրաժեշտությունը վերանում է, այլ ֆարիկայի տարածքում տեղադրվող խտացուցիչներից:

Այս տարբերակի կիրառման դեպքում զգալիորեն կրճատվում են շրջանառու համակարգի խափանման ռիսկերը, ֆարիկայի տեխնոլոգիական ջրապահանջը մոտ 91%-ով ապահովվում է շրջանառու ջրի հաշվին, բացառում է արտադրական ջրերի արտահոսքը Դեբեղ գետ, կրճատվում է թարմ տեխնիկական ջրի ծախսը: Թարմ ջուրը ծախսվում է միայն ռեագենտների լուծությունների պատրաստման և ջրի տեխնոլոգիական կորուստների լրացման համար: Լրացուցիչ թարմ տեխնիկական ջրի ծախսի կրճատման նպատակով նախատեսված է օգտագործել նաև ստորգետնյա հանքի ջրերը՝ աղացման փուլում, 10լ/վրկ կամ 864.0մ<sup>3</sup>/օր քանակով:

Խմելու որակի թարմ ջուրն՝ ըստ պայմանագրի, ստանում են Ախրալա ավանի ռեզերվուարներից, որոնք սնուցվում են Ստեփանավան-Ալավերդի-Նոյեմբերյան ջրատարից: Ֆարիկայի խմելու ջրով ջրամատակարարման համար թարմ ջուրը վերցնում են նաև ձեռնարկության տարածքում գտնվող կապտաժավորված աղբյուրից, քանզի ավանի ցանցից ստացվող ջրի քանակը անբավարար է:

Մթնոլորտ վնասակար արտանետումների որակական և քանակական բնութագրերը 1-ին և 2-րդ տարբերակների դեպքում և ներկա դրությամբ միմյանցից չեն տարբերվում, այդ իսկ պատճառով՝ համաձայն ներկայացված փաստաթղթերի, դիտարկվում են 3-րդ տարբերակը և ներկայումս գործող կոմբինատի տարբերակը:

Հաշվի առնելով, որ բացահանքում արդյունահանման աշխատանքներ չեն իրականացվելու և այն ծառայելու է միայն որպես պոչերի կուտակման պահեստ, հարստացուցիչ ֆարիկայի արտադրողականությունը ապահովելու է ստորգետնյա հանքի հաշվին:

Հարստացուցիչ ֆարիկայում պոչերի խտացումից և քամումից լրացուցիչ արտանետումներ մթնոլորտ տեղի չեն ունենում: Գործող ֆարիկայի ներկա արտանետման աղբյուրների և արտանետումների քանակները մնում են անփոփոխ ըստ ՍԹԱ-ի - 530.8տ/տարի: 3-րդ տարբերակի իրականացման դեպքում վնասակար նյութերի արտանետումների տարեկան քանակը կկազմի 78.16տ/տարի և բացահանքում աշխատանքների դադարեցման հաշվին մթնոլորտ վնասակար արտանետումների տարեկան քանակը կկրճատվի 452.64 տ/տարի քանակով:

Վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկները կատարվել են «Շաղուգա» համակարգչային ծրագրով, համաձայն որի մթնոլորտում վնասակար նյութերի ցրման սպասվելիք մերձգետնյա կոնցենտրացիաները գտնվում են արդերապարակում և բնակելի գոտիների համար սահմանված նորմերում (արտանետման աղբյուրներից 2.0կմ հեռավորության վրա, կազմելով Ա/Հ1- 0.00021÷0.025ՍԹԿ և Ա/Հ2-0.00011÷0.0098ՍԹԿ միավոր): Այսպիսով սպասվելիք մերձգետնյա կոնցենտրացիաները 3-րդ տարբերակի

իրականացման արդյունքում կվնագեն արդիրապարակում՝ 2-5 անգամ, իսկ բնակելի գոտում 1.2 անգամ:

Ըստ նախագծի, 1 տոննա հանքարքի վերամշակման համար ծախսվելու է  $3.0\text{մ}^3$  ջուր: Հանքարքի  $500.0\text{հազ.տ}/\text{տարի}$  վերամշակման դեպքում հանքահարստացման գործընթացում ընդհանուր տարեկան ջրապահանջը կազմում է՝  $1.5\text{մլն.մ}^3$ , որից մոտ  $1.37\text{մլն.մ}^3$  դա պոչերի խտացումից և քամումից առաջացած շրջանառու ջուրն է: Այսպիսով, հանքահարստացման գործընթաց տարեկան մուտք է գործելու մոտ  $1369.13\text{հազ.մ}^3$  շրջանառու ջուր,  $25.0\text{հազ.մ}^3$  ջուր հանքարքի հետ,  $55.81\text{հազ.մ}^3$  հանքի ջրեր և  $50.06\text{հազ.մ}^3$  թարմ տեխնիկական ջուր:

Համաձայն ներկայացված ջրի հաշվեկշռի հոսքաջրերի արտահոսքը շրջակա միջավայր բացառվում է: Թարմ տեխնիկական ջրի ծախսի կրճատումը շրջանառու ջրի և հանքի ջրերի օգտագործման հաշվին կազմելու է  $1424.94\text{հազ.մ}^3/\text{տարի}$ :

Ներկայիս հարստացուցիչ ֆարբիկայի կարիքների համար ծախսում է  $2357.5\text{հազ.մ}^3/\text{տարի}$  թարմ տեխնիկական ջուր: Նախագծի իրականացման դեպքում ֆարբիկայի տեխնոլոգիական ջրապահանջը  $91\%-ով$  ապահովվելու է շրջանառու ջրի հաշվին, որի արդյունքում թարմ տեխնիկական ջրի խնայողությունը կկազմի  $2.3\text{մլն.մ}^3/\text{տարի}$ : Այսպիսով, թարմ տեխնիկական ջրի ծախսը կազմելով ընդամենը  $67.9\text{հազ.մ}^3/\text{տարի}$ :

Ֆարբիկայի շահագործման հետևանքով Ախրալա գետ թափվելու են միայն վակուում-պոմպերի և օդամղիչի հովացման նորմատիվ մաքուր ջրերը  $2160\text{մ}^3/\text{տարի}$  քանակով, իսկ Դեբեղ գետ արտահոսքը բացառվելու է: Չնայած, որ ավելացվելու է ստորգետնյա հանքի ջրերի արտահոսքը դեպի Ախրալա գետ, արդյունքում ջրային ռեսուրսներ թափվող աղտոտող նյութերի քանակը կրճատվի տարեկան  $68\%-ով$  (մոտ  $666.04\text{տ-ով}$ ):

Համաձայն ներկայացված հաշվարկների, առատ անձրևի հետևանքով մակերեսային հոսքեր կամ ներթափանցում գրունտային ջրեր տեղի չի ունենա: Հաշվարկը կատարված է անմիջապես պահեստավորվող պոչերի մակերեսի համար: Շրջակա տարածքներից դեպի պոչերի կուտակման տարածք ջրահոսքերից խուսափելու համար նախատեսվում են ջրահեռացման առուներ:

Ըստ պահեստավորվող պոչերի շերտերի հաստության՝  $0.8\text{մ}$ , որտեղ պահեստավորվող պոչերի մնացորդային խոնավությունը կազմում է  $10\%$ , պոչերի պինդ մասը ներկայացված է միներալ մասնիկներով և դիտարկվում է որպես հիդրոֆիլ համակարգ, ինչը բխում է ֆլուտացման տեխնոլոգիայից:

Միանգամյա տեղումների ընթացքում  $10000.0\text{մ}^2$  մակերեսով  $80\text{սմ}-նոց$  պոչերի շերտը առավելագույնը կարող է ֆիզիկապես ընդունել  $11792.0\text{մ}^3$  ջուր:

Ուժեղ միանգամյա տեղումներից հետո ( $20$  րոպե) պոչերի վերին շերտի խոնավությունը կրարձանա  $1.8\%-ով$ : Հաշվի առնելով, որ պոչերի ելակետային խոնավությունը  $10\%$  էր, ուժեղ միանգամյա տեղումներից հետո ( $20$  րոպե) պոչերի վերին շերտի ընդհանուր խոնավությունը կկազմի՝  $11.8\%$ :

Պահեստավորվող մակարացման ապարներն իրենցից ներկացնում են պայթեցման եղանակով փիլրեցված դատարկ ապարների բեկորներ, որոնց խոնավությունը կազմում է  $4-5\%$ : Հաշվի առնելով ապարների միներալ կազմը և հատկությունները՝ ըստ ներկայացված տվյալների, նրանց միջին ջրահագեցումը կազմում է  $0.51\%$ , արդյունավետ ծակոտկենությունը՝  $1.27\%$ , ծավալային կշիռը՝  $2.68\text{տ}/\text{մ}^3$ , տեսակարար կշիռը՝  $2.8\text{տ}/\text{մ}^3$ :  $0.3-0.4\text{մ}$  հաստությամբ դատարկ ապարի մեկ շերտի ծավալը՝  $1.0\text{հա}$  մակերեսի հաշվարկից, կկազմի  $3000.0\text{մ}^3/\text{հա}$ , քանակը՝  $8400.0\text{տ}/\text{հա}$ : Արդյունքում տեղումների թափման ժամանակ ապարների ջրահագեցումը կկազմի  $42.8\text{մ}^3$ , մեխանիկական բնական խոնավությունը՝  $4.5\%-ից$  կավելանա մինչև մոտ  $10\%$ , ինչը կկազմի  $5.5\%-ը$  կամ  $488.9\text{մ}^3$  ջուր, ապարի շերտում մնալով  $531.7\text{մ}^3/\text{հա}$  ջուր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղումների քանակը մեկ ուժեղ անձրևի ընթացքում՝  $427.68\text{մ}^3/20\text{րոպե-հա}$ , ապա արդյունքում՝ ապարների

ջրահազեցումը  $531.7 \text{m}^3/\text{հա} > 427.68 \text{m}^3/\text{հա}$ : Այսպիսով՝ համաձայն ներկայացված հաշվարկային հիմնավորման, մեկ ուժեղ անձրևի ընթացքում ջրի ներծծումը դեպի ստորին շերտ գործնականորեն տեղի չի ունենում:

Առավելագույն տեղումներով ամսվա համար թափվող անձրևաջրերի քանակը զգալիորեն քիչ է, քան կարող է մեխանիկորեն պահել պոչերի շերտը: Պոչերի խոնավության բարձրացումը կկազմի՝ 4.25%, իսկ ընդամենը պոչերի խոնավությունը տեղումներով առատ ամսվա վերջում առավելագույնը կկազմի՝ 14.25%, ինչը բացառում է պոչերի խոնավության հաշվին ջրերի ներթափանցումը դեպի գրունտային ջրեր: Հաշվարկը կատարված է կուտակման առաջին շերտի համար հետազայում պահեստավորվող պոչերի մակարդակի բարձրացմանը համատեղ, պոչերի խտացման հաշվին ջրերի ներթափանցման հավանականությունը դառնում է անհնար: Ջրի ներծծում ստորին հորիզոններ տեղի չի ունենա:

Ներկայումս շահագործվող “Նահատակ” պոչամբարի մնացորդային ծավալը թույլ է տալիս մեկ տարի շահագործել հարստացուցիչ ֆարբիկան: Պոչամբարի շահագործման ավարտին իրականացվելու է նրա կոնսերվացում և խախտված տարածքի ռեկուլտիվացում: Ռեկուլտիվացման ենթակա խախտված հողատարածքների ընդհանուր մակերեսը 18.6հա է, որից պոչամբար-ֆարբիկա կապող ավտոճանապարհ՝ 4.6հա և պոչամբար՝ 14.0հա:

Համաձայն ներկայացված փաստաթղթերի՝ ուկուլտիվացիոն միջոցառումների ծրագիրը ներառում է պոչամբարից ավելորդ ջրերի հեռացում, դրևնաժային համակարգի վերականգնում, պոչամբարի մակերեսի և պատնեշի լեռնատեխնիկական և կենսաբանական ուկուլտիվացում՝ հիդրոցանքի եղանակով, սպասարկող ավտոճանապարհների փխրեցում, հողաբուսական շերտով ծածկում, խախտված տեղամասերի վերականգնում, հանդակների փոստրակների լցնում:

ՈԵԿՈՒԼՏԻՎԱԳՄԱՆ աշխատանքները կանոնակարգվում են ՀՀ կառավարության 28/05/2006թ. թիվ 750-Ն որոշումով հաստատված Տեխնիկական կանոնակարգով: ՈԵԿՈՒԼՏԻՎԱԳՄԱՆ են ենթակա պոչամբարի մակերեսները, փեշերը: ՈԵԿՈՒԼՏԻՎԱԳՄԱՆ աշխատանքները նախատեսվում է կատարել 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական:

Տեխնիկական ուկուլտիվացումը նախատեսում է մակերեսների հարթեցում և ազատում խոշորաբեկոր ապարներից, մուտքային ճանապարհների կարգավորում՝ հարթեցման աշխատանքները կատարելով բուլղողերով։ Կենսաբանական ուկուլտիվացումը կատարում են տեխնիկական ուկուլտիվացումից հետո։ Իբրև կենսաբանական ուկուլտիվացման եղանակ նախընտրելի է հիդրոցանքի եղանակը, որը կարող է կիրառվել բոլոր տեսակի գրունտների համար։

Ուկուլտիվացման ընդհանուր ծախսը կկազմի 1545.0հազ.դրամ/հա կամ  $\approx 21.63$  մլն.դրամ:

Մոտակա աղմուկի աղբյուրի և Շամլուդ քաղաքի եզրային շինությունների միջև հեռավորությունը 1000.0մ է, այդ իսկ պատճառով աղմուկի մակարդակի հաշվարկը, ինչպես ներկա իրավիճակում այնպես էլ III տարբերակի դեպքում կատարվել է սանիտարապաշտապնիշ գոտու (ՍՊԳ) սահմանին՝ 100.0մ։ Համաձայն ներկայացված տվյալների՝ աղմուկի մակարդակը ՍՊԳ սահմանին կազմում է մոտ 53դԲԱ (նորմա 60-70դԲԱ), որը ըստ գործող նորմերի գտնվում է նորմայի սահմաններում։

Նախատեսվել է նաև հակավթարային և արտակարգ իրավիճակներին ուղղված միջոցառումներ, որոնց իրականացման համար ձեռնարկությունը համարունակ արտակարգ իրավիճակների ծառայության հետ մշակելու է վթարների վերացման պլան և ուժմեջ դրանց իրականացման սցենարը: Խումբը պետք է ունենա համապատասխան հաղորդակցման համակարգ (ինֆորմացիոն և շարժունակ կապ), որով կարող է կապվել ձեռնարկության վարչական կազմի, տեղական ինքնակառավարման մարմինների: ԱԻ նախարարության, շտագ օգնության հետ, ժամանակ առ ժամանակ մշակվ վթարային իրավիճակների տարբեր սցենարներ և անզեկազնի վարժանքներ:

Զենոնարկության շահագործման արդյունքում կառաջանա նաև թափոններ, որոնց բանական և որակական ցանկը ներկայացվում է աղյուսակում:

N	Անվանումը	Վտանգա-վորության դասը	Կոդը բառ «Թափոնների ցանկի»	Չափման միավորը	Քանակը Ներկա / նոր տեխնոլոգիա
1	Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան	II	92110100 13 01 2	տ/տարի	0,6 / 0,48
2	Բանեցված արդյունաբերական յուղեր	III	54100205 02 03 3	տ/տարի	4,44 / 4,44
3	Բանեցված կոմպրեսորային յուղեր	III	54100211 02 03 3	տ/տարի	1,57 / 1,57
4	Հալոգոններ չպարունակող բանեցված հիդրավլիկ յուղեր	III	54100213 02 03 3	տ/տարի	4,45 / 4,45
5	Բանեցված դիզելային յուղեր	III	54100203 02 03 3	տ/տարի	10,8 / 8,64
6	Բանեցված գործվածքի կորդով որոշածկաններ	IV	57500202 13 00 4	տ/տարի	28,44 / 22,75
7	Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված առլ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	91200400 01 00 4	տ/տարի	25 / 25
	Ընդամենը	-	-	տ/տարի	75,3 / 67,33


Ընդհանրացնելով և վերլուծելով ներկայացված նախագծային փաստաթղթերը, ՀՀ բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքները, ինչպես նաև փորձաքննության գործընթացում ի հայտ եկած դիտողություններն ու առաջարկությունները, 27.10.2017թ. Շամլուղի քաղաքային համայնքի տարածքում իրականացված հանրային քննարկումների արդյունքները և լիազոր մարմնի կողմից ներգրաված փորձագետի եզրակացությունը, կարելի է անել հետևյալ եզրահանգումներ:

Ախրալայի հարստացուցիչ ֆարբիկան գործել է 1967-1988 թվականներից: Ֆարբիկայում վերամշակվում էին Շամլուղի հանքավայրի պղինձ պարունակող և Ախրալայի բազմամետաղային հանքավայրի հանքաքարերը: Ֆարբիկայի աշխատանքները դադարեցվեցին ԽՍՀՄ ՄԽ 01.07.1989թ. N66/317 որոշման համաձայն: Ապամոնտաժվեցին սարքավորումները: 2001թ. Լեռնամետալուրգիայի ինստիտուտի կողմից մշակվեց և իրականացվեց Ախրալայի հարստացուցիչ ֆարբիկայի վերագործարկման նոր նախագիծը, որով նախատեսվում էր վերամշակել միայն Շամլուղի հանքավայրի պղնձա-կոլշեդանային հանքաքարերը: Դա պայմանավորված է նրանով, որ Ախրալայի հանքավայրի պաշարները սպառվել են:

Ներկայացված նախագծային փաստաթղթերի համաձայն՝ <<Ախրալայի ԼՀԿ>> ՓԲԸ-ի կողմից <<Ախրալայի հարստացուցիչ ֆարբիկայի բացահանքի արդյունահանված տարածքում պոչերի պահեստավորման>> գործընթացը իրականացվելու է՝ օգտագործելով արդի գիտական փորձը, շրջակա միջավայրին նվազագույն վնաս հասցնող տեխնոլոգիաների կիրառումով, մեղմացնելով լանշաֆտին հասցելիք զգալի ազդեցությունները և փոքրացնելով հանքի շահագործման արդյունքում խախտված հողատարածքների մակերեսը:

Ներկայացված նախագծային փաստաթղթերի և ՇՄԱԳ հաշվետվության հիմնական նպատակն է հնարավորինս մեղմացնել, նվազեցնել կամ կանխարգելել նախատեսվող գործունեության իրականացման և շահագործման արդյունքում ակնկալվող բնապահպանական բացասական ազդեցությունները, համաձայն որի:

- չի խախտվի 14.0հա նոր պոչամբարի տակ նախատեսվող հողատարածքը;
- չեն հատվի ծառեր և թփուտներ, չի հանվի հողաբուսական շերտը;



- չեն ոչնչանա նստակյաց կյանք վարող կենդանիների պոպուլյացիաները և ցամաքային անողնաշար կենդանիները;
- կրացառվի արտադրական կեղտաջրերի արտահոսքը բաց ջրավագաններ;
- 15% կավելանա շրջանառու ջրի օգտագործումը՝ հասնելով 90-91% և տարեկան կտնտեսվի շուրջ 1369.13հազ.մ<sup>3</sup> թարմ տեխնիկական ջուր;
- պոչատարի բացակայությունը կկանխի հավանական վթարները պոչերի տեղափոխման ժամանակ (զործող պոչատարի երկարությունը 6.5կմ);
- ավելի հուսալի կլինի տեղային շրջանառու ջրի համակարգի աշխատանքը;
- դատարկ ապարներով խոնավ պոչերի մակերեսի ծածկումը թույլ կտա նվազեցնել փոշու արտանետումները՝ միաժամանակ կրծատելով լցակույտերում կուտակվող դատարկ ապարների ծավալը;
- թափոնների և կենցաղային աղբի հեռացում՝ համապատասխան համաձայնությունների առկայության դեպքում,
- իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող և այլն) մոնիթորինգ և այլն:

Բացահանքում պոչերի կուտակման եղանակի դրական կողմերից մեկն այն է, որ իրականացվելու է նաև բացահանքի ռեկուլտիվացիա՝ փաստացի տեղի է ունենում տեխնիկական փուլային ռեկուլտիվացիա: Բացահանքի վերջնական մակերեսին հասնելուց հետո կիրականացվի կենսաբանական ռեկուլտիվացիա: Դատարկ ապարների շերտը կհարթեցվի, կծածկվի հողի բերրի շերտով և կիրականացվի տարածքին բնորոշ խոտարույսերի ցանք: Կվերականգնվի տեղանքի ռելիեֆը և դրենաժային համակարգը:

Շինարարության և շահագործման ընթացքում <<Ախրալայի ԼՀԿ>> ՓԲԸ-ի կողմից <<Ախրալայի հարստացուցիչ ֆարբիկայի բացահանքի արդյունահանված տարածքում պոչերի պահեստավորման>> ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված միջոցառումների արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կզտնվի թույլատրելի նորմերի սահմաններում: Նախագծում լուծված են հոսքաջրերի հեռացման և մաքրման, աղբահեռացման, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման, հանքավայրի ռեկուլտիվացիայի հարցերը: Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված բավարար միջոցառումներ:

Նշեմ նաև, որ համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> օրենքի հոդված 20-ի 7-րդ կետի՝ փորձաքննական եզրակացությունը կորցնում է ուժը, եթե նախատեսվող գործունեության իրականացումը չի սկսվում փորձաքննական եզրակացության տրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

### Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում՝ ելնելով տեղանքի յուրահատկություններից, անհրաժեշտ է խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում, նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական նախագծման նորմերին, բնապահպանական և սոցալական կառավարման ծրագրի պահանջներին, իսկ դրանց չքավարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման համապատասխան միջոցառումները:
2. Մինչև պոչամբարի գործածության ժամկետի ավարտ անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ բնապահպանության նախարարություն շրջակա միջավայրի վրա ազդեցության, փորձաքննության ներկայացնել <<Նախատեսված պոչամբարի կոնսերվացման, ինչպես նաև խախտված ամբողջ (հանքավայր, պոչամբար, ճանապարհներ, լցակույտեր և այլն) տարածքների վերականգնման (ռեկուլտիվացիայի) համապատասխան ՇՄԱԳ հաշվետվությունները՝ կից նախագծային փաստաթղթերով:



3. Գործունեության ընթացքում անհրաժեշտ է իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող և այլն) մոնիթորինգ, կազմել հետնախազգային վերլուծության ծրագիր, անհրաժեշտության դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը: Հետնախազգային վերլուծության ծրագիր պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմինների և հանրության համար:

4. Մինչև գործունեության իրականացումը անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ (մասնավորապես՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համաձայնությունը, ջրօգտագործման թույլտվությունը և այլն):

5. Շինարարության և շահագործման ընթացքում առաջացած շինադրի հեռացումը (կենցաղային աղբ), ինչպես նաև ջրօգտագործումը անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Ախթալայի ԼՀԿ>> ՓԲԸ կողմից ներկայացված <<Ախթալայի հարստացուցիչ ֆաքտիկայի բացահանքի արդյունահանված տարածքում պոչերի պահեստավորման>> աշխատանքային նախազի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պահպանիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ



Կ. Սովսիսյան